

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅԵՐԸ ԵՒ ԷՏՐՈՒՍԿՆԵՐԸ

Փարիզեան կրան - Փալէում "Les Etrusques et l'Europe" ցուցահանդէսը նախատեսուած էր 1992 թ. Սեպտեմբերի 19-ից մինչեւ Դեկտեմբերի 14ը: Սակայն բազմաթիւ յանախորդների հոսքը թոյլ չտուեց ցուցահանդէսը ժամկէտին փակել եւ կազմակերպիչները ստիպուած եղան այն երկարեցնել եւս մէկ ամիս:

Ի՞նչն էր այդքան ուշագրաւ այդ ցուցահանդէսում որ ստիպում էր մարդկանց ամէն օր համբերութեամբ կանգնել երկարատեւ հերթերում եւ սպասել այն պահին երբ վերջապէս կը յաջողուի այցելել ցուցահանդէսը:

Առաջին բացատրութիւնը կարող է լինել այն, որ Եւրոպացիները փնտռում են իրենց մշակոյթների ընդհանուր ակունքները: Եթէ նրանք ինչ որ չափով իրենց համարում են հին Յունաստանի եւ Հռոմի մշակոյթների ժառանգորդները, ապա նրանք յաճախ մոռանում են այն հսկայական դերի մասին, որը մինչ Հռոմը կատարել էին Էտրուսկները:

Երկրորդը՝ այն, որ դա առասպելանման մի ժողովուրդ էր, որը մինչ այսօր էլ հանելուկ է մնում շատ հետազոտողների համար: Միայն մի խորհրդաւոր մշուշ է որը պատում է անգամ յայտնի տեղեկութիւնները այդ ժողովրդի մասին:

Բայց գուցէ այդ «խորհրդաւոր մշուշը» այդքան էլ թափանցելի չէ՞, եթէ հաշուի առնենք այն, որ Էտրուսկագիտութիւնը պարզօրէն իր ծնունդն է առել Էտրուսկագիտութիւնից: Բայց այդ մասին՝ քիչ յետոյ ...

Դառնալով ցուցահանդէսին ասեմք, որ այն բաժանուած էր երկու հիմնական մասերի:

Առաջին բաժինը ներկայացնում էր Էտրուսկիայի կապը Եւրոպայի միւս հին մշակոյթների հետ: Այստեղ պարզ երեւում էր Էտրուրիայի (այժմեան Թոսկանա մարզը Իտալիայում) արտակարգ տեղը հին աշխարհում: Էտրուսկները հանդէս էին գալիս իբրեւ մի օղակ, որը մի կողմից կապում էր հին Արեւելքի եւ հին Յունաստանի մշակոյթները Հռոմի հետ, իսկ միւս կողմից նրանք հասցնում էին ամբողջ միջերկրածովային մշակոյթի նուաճումները դէպի կենտրոնական եւ արեւմտեան Եւրոպա, որը դեռ ապրում էր իր նախապատմական շրջանը:

Հռոմէացիները չէին դադարում կրկնել որ իրենք պարտական են Էտրուսկներին բոլոր իրենց գիտելիքներով՝ պետականութեան, ճարտարապետութեան, նաւաշինութեան, թատրոնի, նուագական արուեստի, բժշկութեան եւ գուշակութեան ասպարէզներում:

Ժամանակակից հետազոտողները կարող էին դրան ւսելացնել նաեւ գիրը տարածելու դերը կենտրոնական եւ հիւսիսային Իտալիայում, մետաղամշակումը, խեցեղէնը, քաղաքաշինութիւնը, ջրանցքների կառուցումը եւ այլն:

Բաւական է միայն նշել հռոմէացի պատմիչ Թիթուս Լիվիուսի յիշատակումը այն մասին, որ ամենահարուստ Հռոմէացիները իրենց որդիներին ուղարկում էին Էտրուրիա ուսում առնելու:

Երկրորդ բաժինը այս ցուցահանդէսում ներկայացնում էր նիւթերով, որոնք արտայայտում էին ւսելի ուշ շրջանի Էտրուսկեան մշակոյթի արձագանգները Եւրոպայում: Այդ նիւթերից էին յայտնի հնագիտական եւ արուեստագիտա-

կան արժեք ունեցող պրոնգե առիծագուլիս փմերը (Դ. դար, Ֆլորենցիա) որը ցուցահանդեսի խորհրդանիշն էր հանդիսանում, Հերմեսի գուլիսը (Դ. դար, Հռոմի Վիլլա Ջուլիա Քանգարանից), ամուսինների սարժոփածը, երիտասարդի պրոնգե արձանը (Ս. Պետրսբուրգի էրմիթաժից) և այլն:

Այս ցուցահանդեսին կից անցկացուցեց երկու գիտաժողով՝ «Ամենակրօնապաշտ ժողովուրդը» (էտրուսկների կրօնապաշտութեան և կրօնի մասին) և «էտրուսկների ներդրումը եւրոպական մշակույթում»:

Եթե հաշուի առնենք որ ցուցահանդեսում ներկայացուած էին այն արուեստի մօտ 650 նմուշներ եւրոպայի հարիւր Քանգարաններից, ապա պարզ կը լինի Կրան-Փալէի ցուցահանդեսի կարեւորութիւնը և նշանակութիւնը:

Բնական է որ ինձ, որպէս Հայ և հայագէտ, հետաքրքրում էին այն նիւթերը որոնք կապուած էին Արեւելի հետ, և ներկայացուում էին իբրեւ «Արեւելի հետ առեւտրական կապ ունենալու արդիւնք»:

Այստեղ եւս արտայայտուեց այն երկու կարծիքների գիտական առնակատման արդիւնքը որը տիրում էր և շարունակում է տիրել այսօրուայ էտրուսկագիտութիւնում: Խօսքը գնում է էտրուսկների ծագման (էթնոթեզների) մասին: Այստեղ խառնաշփոթ են ստեղծում էտրուսկեան մշակույթին պատկանող նիւթերի նմանօրինակները, որոնք տարածուած են ամբողջ միջերկրածովային մշակույթի շրջանում՝ Հայաստանից, Կովկասից և Միջագետքից մինչև Սպանիա:

Մի շարք գիտնականներ զարգացնելով Հերոդոտոսի տեսակետը առաջ էին քաշել էտրուսկների արեւելեան ծագման միտքը, իսկ Ա. Փիֆանելլը, Հ. Միլեշթայնը, Ռ. Ամանտրին, Ռ. Էլլիսը, Վ. Կերկիսը, Ն. Մառը և նրա հետնորդները գտնում էին որ էտրուսկները հայկական ծագում ունեն:

Վերոյիշեալ հետազօտողները լուրջ և անուանի գիտնականներ էին և հնարաւոր չէ անուշադրութեան մատնել նրանց հնագիտական և պատմա-լեզուաբանական հետազօտութիւնների արդիւնքը:

Միւս գիտնականները փորձ են կատարում հաստատել որ էտրուսկները տեղաբնիկ են և նրանց մշակույթը Իտալիայի նախաէտրուսկեան (Վիլլանովայի) մշակույթի շարունակութիւնն է, քանի որ ունի շատ ընդհանրութիւն: Սակայն, ինչպէս գրում է Ժամանակակից յայտնի էտրուսկագէտ Ա. Ի. Նեմիրովսկին՝ «էտրուսկների խառնուելը տեղի քնակչութեան հետ Իտալիայի գաղութացման ընթացքում, դա մի այլ կարգի երեւոյթ է, քան էտրուսկեան էթնոթեզները» (Ա. Ի. Նեմիրովսկի, «էտրուսկները», Մոսկուա, 1983, էջ 16, ռուսերէն):

Խօսել այսօր էտրուսկների նախնիների հայկական ծագման մասին նշանակում է հաշուի չառնել նոր հետազօտութիւնների ընթացքում առաջ քերտող հարցերը, որոնք դեռ իրենց վերջնական պատասխանին են սպասում: Բայց նաեւ սխալ կը լինէր հաշուի չառնել այն հետազօտութիւնները որոնց արդիւնքով վերոյիշեալ գիտնականները գտնում էին էտրուսկներին և Հայերին կապող օղակները:

Լինելով հնաքան - երաժշտագէտ, տողերիս հեղինակը իր աշխատանքների ընթացքում նոյնպէս հանդիպեց մի շարք հարցերի, որոնք այս անգամ կապուած էին Հայերի և էտրուսկների երաժշտական մշակույթների հետ:

Փորձենք պարզաբանել այդ հարցերը:

1.- Հին Հռոմէացիները պաշտում էին Նեննիա դիցուհուն, որը համարում էր մեռելացիների հովանաւորողը: Նրա պատուին երգում էին «Նեննիա» կոչուող ողբերը, որոնք նուագակցւում էին սրինգներով: Ողբում էին մահացողին հարազատ կանայք, սակայն գլխաւորողը

մի վարձկան եղբրամայր էր:

Յայտնի պատմաբան - գրականագետ Ի. Տոռնսկին գրում էր, որ «նեննիա» տերմինը Հռոմ է հասել Փոլիգիացիներից էտրուսկների միջոցով: Աւելացնեմ որ դա Նանա-Նանե դիցուհու պաշտամունքի արձագանգն է, որը երկրպագում էր ինչպես Փոլիգիացիների, այնպես էլ Հայերի կողմից (չմոռանամ Հայերի և Փոլիգիացիների ազգակցական կապը որը ժամանակին նշել են Հերոդոտոսը և Եւդոբուս Կնիդացին): Հայկական աւանդութիւններն են յիշեցնում նաեւ լացող կանայք և նրանց գլխաւորող վարձկան կինը, որը հայկական միջնադարեան գրականութիւնում ունէր «վարձակ» անունը: Խորք չէ մեզ նաեւ սրինգի (դուդուկի) նուագակցութիւնը սգոյ արարողութիւնների ժամանակ:

Նախօրօք ասեմք որ նման փաստերի կարելի է հանդիպել և այլ միջերկրածովային մշակոյթի ժողովուրդների մօտ, դա քնական է, սակայն մեր ուշադրութիւնը պէտք է գրաւի այն, որ նման փաստերը հայ մշակոյթի մէջ այնքան յաճախ են հանդիպելու, որ չեն կարող որոշակի եզրակացացման առիթ չհանդիսանալ:

2.- Հայկական Նանե դիցուհին հելլենիստական Հայաստանում նոյնացում էր յունական Աթենասի հետ, որը իր հերթին համագոր էր հռոմէական Մինեովային:

Եւ ահա գերմանացի գիտնական Կ. Միւլլերը ժամանակին նկատել էր որ սրինգի և շփորի օգտագործումը իր ակունքներով Խալիայում հասնում է մինչեւ էտրուսկները, իսկ Յունաստանում մինչեւ Լիդիական Տիրէները (էտրուսկների փոքրասիական նախնիները): Եւ Հռոմում և Յունաստանում այդ նուագարանները կապում էին նոյն դիցուհիների՝ Մինեովայի և Աթենասի հետ: Տոգերիս հեղինակը ցոյց է տուել որ նոյնը կարելի

է կապել Նանե հայկական դիցուհու հետ:

3.- Առանձնայատուկ հետաքրքրութիւն է առաջացնում էտրուսկա - հռոմէական սրինգների "tibia" անուանումը, որի շուրջ պէտք է աւելի մանրամասնօրէն խօսել:

Այս "tibia" կոչուող սրինգները եղեգնալեզուակային հնչարտարքերումով նուագարաններ էին, որոնց հայկական մամօրինակները կարող են գտնւան և դուդուկը հանդիսանալ: Ընթերցողներից շատերը հանդիպած կը լինեն այս "tibia" նուագարանների (յունական "aulos") երկվող տարբերակների պատկերներին յունահռոմէական և այլ հին նկարներում և բարձրաբանդակներում:

Հռոմէական պատմիչ Վառոնը վկայում է որ դիպիա նուագարանը Հռոմէացիները վերցրել են էտրուսկներից: Կ'աւելցնէիմք որ հաւանական է, վերցուած էր ոչ միայն նուագարանը այլ նաեւ իր դիպիա անուանումը:

Այդ միտքը ամրապնդում է նաեւ այն փաստով որ հիթիթական արձանագրութիւնները (Ք.Ա. Երկրորդ Հագարամեակ) յիշատակում են "Tibia" տեղանունը:

Հաւանօրէն այդ դիպիա տեղանունը պատկանում էր մի տարածքի որը գտնւում էր Հայաստահայկական Պետութեան արեւմտեան մասում, որտեղ սահմանակցում էր հիթիթական աշխարհին: Այս տեղանունի ստուգաբանութիւնը ենթադրում է նրա հիմքում նախահնդեւրոպական "ti" արմատը որը տալիս էր «ոյս, լուսաւորել» նշանակութիւնը: Այս "Ti" արմատի հետ է կապուած հիթիթական "Tivat" արեւի աստուածութեան անունը: Այդ արմատը դրուած է շատ քառերի հիմքում որոնք նշանակում էին ոչ միայն «արեւ» այլ ընդհանրապէս «աստուած»: Պէտք է նշել որ Հայոց լեզուում պահպանուել է «տիւ» բառը որը նշանակում է «օր»: Այդ "ti" արմատի հետ, ըստ յայտնի լեզուաբան

կրեչմերի, կապուած է նոյնպէս էտրուսկների գլխաւոր աստուած "Tir"ի անունը:

Կարելի է ենթադրել որ այն տարածքը, որը յիշատակում է հիթիթական աղբիւրներում "Tibia" տեղանունով, ինչ որ ձեռով կապուած է եղել աստուածութիւնների պաշտամունքների հետ: Երեւի պատահական չէ որ այդ տեղից ոչ հեռու գտնուել են հայկական Արամազդի, Անահիտի, Նանէի եւ այլ աստուածութիւնների պաշտամունքային կենտրոնները:

Քանի որ խօսքը գնում էր "tibia" կոչուող էտրուսկա-հռոմէական սրինգի մասին, ապա դժուար չէ պատկերացնել որ այդ նուագարանը նոյնպէս կարող էր կապուած լինել արեւի պաշտամունքի հետ եւ կրէր պաշտամունքային "tivia" կամ "tibia" անունը (տուեալ դէպքում "v" եւ "b" հնչիւնափոխումը ընդունելի պէտք է համարել, քանի որ մենք ունենք շատ նման օրինակներ որոնք հանդիպում են ոչ միայն տարբեր լեզուախմբերի, այլ նաեւ լեզուների եւ իրենց բարբառների մէջ):

Այս փողային նուագարանի կապը արեւի աստուածութեան հետ, նոյնպէս ունի իր գուգահեռները հայկական աւանդութիւնում:

Զէ՞ որ փողային նուագարանով են նուագում մեզ մօտ լուսաբացային մեղեդիները, որոնք կոչւում են «կանչ» կամ «սահարի»:

Այդ լուսաբացային մեղեդիները իւրատեսակ հիմներ էին ծագող արեւին, եւ նրանց նախկին կապը արեւի պաշտամունքի հետ անվիճելի է համարում:

Սակայն ի՞նչ դեր էին կատարում այստեղ փողային նուագարանները, ինչո՞ւմ էր կայանում նրանց այդ աստիճանի կարեւորութիւնը, որը առիթ էր տալիս կապել նրանց անունը արեւի աստուածի հետ եւ յետագայում "tibia"

անուանումով յայտնուել իտալիայում:

Հին Արեւելքում լուսաբացը ընդունւում էր իբրեւ վերածնունդ կամ յարութիւն առնող արեւային աստուածութեան յաղթանակը խաւարի (մահի) թագաւորութիւնը արտայայտող վիշապի նկատմամբ: Հայ ժողովրդի մօտ նման պատկերացումները արտայայտուած են Գեղամայ եւ Վարդենիսեան լեռների ժայռապատկերներում, «Սասունցի Դաւիթ» ժողովրդական էպոսում, վիշապաբաղ Վահագնի մասին առասպելներում (որի նմանօրինակները Պիթոնին յաղթող Ապպոլոնը եւ Ապոլլիս վիշապի հետ պայքարող Եգիպտոսի Ռաարեւի աստուածն են), Ներսէս Շնորհալու մանկական հանելուկում, որտեղ արեւը ամէն օր «ծնւում է, մեծանում եւ նոյն օրը մահանում է», եւ այլ պատմական աղբիւրներում:

Յայտնի է նաեւ, որ հին Արեւելքում փողային նուագարաններին վերագրւում էր նոր շունչ եւ յարութիւն տալու յատկութիւններ, ըստ երեւոյթին ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրանց նուագը կապուած էր շնչառութեան հետ:

Այսպիսով, ստացւում է որ լուսաբացային մեղեդիների կատարումը փողային նուագարանով, ներկայացւում էր իբրեւ վերածնունդ արեւի աստուածութեանը կենսական ուժ հաղորդելու մի մոգական գործողութիւն: Միաժամանակ այդ մեղեդիները մի գովերգ էին խաւարը յաղթող արեւին: Պատահական չէ որ հին Յունաստանում երկփող սրինգ (aulos) նուագողների մրցոյթում յաղթող էր ճանաչուել Սակադ անունով մի երաժիշտ (Զ. դար Ք. Ա.), որ կատարել էր լուսապայծառ Ապպոլոնի յաղթանակը Պիթոն վիշապի նկատմամբ նկարագրող եւ գովերգող մի երաժշտութիւն, որը ըստ անուղղակի տուեալների, պէտք է որոշ չափով նմանուէր հայկական աւանդութիւնում պահպանուած լուսաբացային մեղեդի-

կրեչմերի, կապուած է նոյնպէս էտրուսկների գլխաւոր աստուած "Tir"ի անունը:

Կարելի է ենթադրել որ այն տարածքը, որը յիշատակում է հիթիթական աղբիւրներում "Tibia" տեղանունով, ինչ որ ձեռով կապուած է եղել աստուածութիւնների պաշտամունքների հետ: Երեւի պատահական չէ որ այդ տեղից ոչ հեռու գտնուել են հայկական Արամազդի, Անահիտի, Նանէի եւ այլ աստուածութիւնների պաշտամունքային կենտրոնները:

Քանի որ խօսքը գնում էր "tibia" կոչուող էտրուսկա-հռոմէական սրինգի մասին, ապա դժուար չէ պատկերացնել որ այդ նուագարանը նոյնպէս կարող էր կապուած լինել արեւի պաշտամունքի հետ եւ կրէր պաշտամունքային "tivia" կամ "tibia" անունը (տուեալ դէպքում "v" եւ "b" հնչիւնափոխումը ընդունելի պէտք է համարել, քանի որ մենք ունենք շատ նման օրինակներ որոնք հանդիպում են ոչ միայն տարբեր լեզուախմբերի, այլ նաեւ լեզուների եւ իրենց բարբառների մէջ):

Այս փողային նուագարանի կապը արեւի աստուածութեան հետ, նոյնպէս ունի իր գուգահեռները հայկական աւանդութիւնում:

Զէ՞ որ փողային նուագարանով են նուագում մեզ մօտ լուսաբացային մեղեդիները, որոնք կոչւում են «կանչ» կամ «սահարի»:

Այդ լուսաբացային մեղեդիները իւրատեսակ հիմներ էին ծագող արեւին, եւ նրանց նախկին կապը արեւի պաշտամունքի հետ անվիճելի է համարում:

Սակայն ի՞նչ դեր էին կատարում այստեղ փողային նուագարանները, ինչո՞ւմ էր կայանում նրանց այդ աստիճանի կարեւորութիւնը, որը առիթ էր տալիս կապել նրանց անունը արեւի աստուածի հետ եւ յետագայում "tibia"

անուանումով յայտնուել իտալիայում:

Հին Արեւելքում լուսաբացը ընդունւում էր իբրեւ վերածնունդ կամ յարութիւն առնող արեւային աստուածութեան յաղթանակը խաւարի (մահի) թագաւորութիւնը արտայայտող վիշապի նկատմամբ: Հայ ժողովրդի մօտ նման պատկերացումները արտայայտուած են Գեղամայ եւ Վարդենիսեան լեռների ժայռապատկերներում, «Սասունցի Դաւիթ» ժողովրդական էպոսում, վիշապաբաղ Վահագնի մասին առասպելներում (որի նմանօրինակները Պիթոնին յաղթող Ապոլոնը եւ Ապոլիս վիշապի հետ պայքարող Եգիպտոսի Ռաարեւի աստուածն են), Ներսէս Շնորհալու մանկական հանելուկում, որտեղ արեւը ամէն օր «ծնւում է, մեծանում եւ նոյն օրը մահանում է», եւ այլ պատմական աղբիւրներում:

Յայտնի է նաեւ, որ հին Արեւելքում փողային նուագարաններին վերագրւում էր նոր շունչ եւ յարութիւն տալու յատկութիւններ, ըստ երեւոյթին ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրանց նուագը կապուած էր շնչառութեան հետ:

Այսպիսով, ստացւում է որ լուսաբացային մեղեդիների կատարումը փողային նուագարանով, ներկայացւում էր իբրեւ վերածնունդ արեւի աստուածութեանը կենսական ուժ հաղորդելու մի մոգական գործողութիւն: Միաժամանակ այդ մեղեդիները մի գովերգ էին խաւարը յաղթող արեւին: Պատահական չէ որ հին Յունաստանում երկփող սրինգ (aulos) նուագողների մրցոյթում յաղթող էր ճանաչուել Սակադ անունով մի երաժիշտ (Զ. դար Ք. Ա.), որ կատարել էր լուսապայծառ Ապոլոնի յաղթանակը Պիթոն վիշապի նկատմամբ նկարագրող եւ գովերգող մի երաժշտութիւն, որը ըստ անուղղակի տուեալների, պէտք է որոշ չափով նմանուէր հայկական աւանդութիւնում պահպանուած լուսաբացային մեղեդի-

Ներին:

Վերջապես, անելոդ չէր լիներ հաշուի առնել նաեւ փողային նուագարանների ձայնի հզօրութիւնը, որը թոյլ էր տալիս հետուից կոչ անել, կանչել ժողովրդին արեւի աստուածութեանը երկրպագելու համար: Հէնց այստեղից էլ այդ մեղեդիները կրում են իրենց հայկական «կանչ» անունը: Յետագայում նման մեղեդիների աւանդութիւնը մնաց, սակայն արեւի երկրպագման ծէսերը վերանալուց յետոյ «կանչ» անուանումը պահպանուեց որպէս «հովուի կանչ»: Արեւի պաշտամունքի մասին յիշեցնում է միայն այդ մեղեդիների իրանական «սահարի» (լուսաբացային) անուանումը:

Ի դէպ, պատահական պէտք է համարել այն փաստը որ որոշ, միջերկրածովային մշակոյթի հետ կապուած ժողովրդների մօտ սրինգները պատրաստում էին արագիլի եւ արծուի սրունքներից (ծունկի եւ թաթի միջեւ գտնուող խողովակաձեւ ոսկորից):

Հայաստանում Գառնիի եւ Դուինի պեղումներից գտնուած սրինգները պատրաստուած էին արագիլի սրունքից: Հնարարը է որ «գուռնա» բառը նոյնպէս կապուած լինի սանսկրիտեան «sur» արմատի հետ «արեւ» նշանակութեամբ:

Հարկ է նշել որ «tibia» բառը լատիներէնում ունի երկու նշանակութիւն՝ «սրինգ» եւ «սրունք»:

Շատերը, չխորանալով այս բառի պատմական ստուգաբանութեան մէջ, կարող են յայտնել այն կարծիքը որ «սրունք» նշանակութիւնը առաջանաւորւած պիտի լինի, քանի որ սրունքներից էին պատրաստուել սրինգները: Սակայն լատիներէնում կայ «krus» բառը որը նոյնպէս սրունք է նշանակում: Իսկ փաստերը ցոյց են տալիս որ «tibia» բառը «սրինգ» նշանակութեամբ անելի վաղուց է օգտագործուել լատիներէնում (տե՛ս. «Dictionnaire

etymologique de la langue latine, Histoire des mots par A. Ernout et A. Meillet, 4eme edition, Paris, 1967, էջ 691): Իսկ յետագայում, հաշուի առնելով այն որ այդ «tibia»-ները պատրաստում էին սրունք-ներից, այդ սրունքները, բացի «krus» բառից, կարող էին նաեւ «tibia» անուանուել: Իսկ «դիպիա» էտրուսկա-հռոմէական սրինգի պատմա-լեզուաբանական վերլուծութիւնը մեզ ցոյց տուեց որ այդ նուագարանի օգտագործման աւանդութիւնները իրենց ակունքով հասնում են Փոքր Ասիա, որտեղ շատ ընդհանրութիւններ են գտնում հայկական երաժշտա-մշակութային աւանդութիւնում:

Համոզուած ենք որ այս, երաժշտական մշակոյթի հետ կապուած փաստարկները անելի հաստատուն կը լինէին, եթէ մենք նրանք դիտէինք միւս մշակութային տարրերի հետ մէկտեղ: Դիմենք էտրուսկական կրօնին, որը անմիջական կապ պէտք է ունենար պաշտամունքային երաժշտութեան հետ:

Պէտք է ասել որ արդէն յայտնի է վաղուց ի վեր, որ էտրուսկները իրենց ժամանակի ամենակրօնապաշտ ժողովուրդն են համարուել: Այդ մասին տեղեկացնում էին դեռ հռոմէական պատմիչները Liv. V, 1. 6; Arnob; VII, 26): Պատահական չէր Կրան-Փալէի ցուցահանդէսին կից գիտաժողովը՝ «Ամենակրօնապաշտ ժողովուրդը» անուանումով:

Մենք արդէն նշեցինք էտրուսկների Նեննիա եւ հայկական Նանէ դիցուհիների նմանօրինակութիւնը եւ նրանց կապը երգի եւ նուագի հետ: Ըստ Ստրաբոնի տեղեկութեանը (Strabo V, 2,2) էտրուսկների 12 բաղաձայնի միաւորման հիմնադիրը առասպելական Տարբոն էր: Դժուար չէ նկատել որ այդ անունը պէտք է անմիջական կապ ունենայ հայկական Տորք (Անգեղ) եւ հիթիթա-լուվիական Տարբոն (Թարխուն) ամպրոպի աստուա-

ծուրիւնների հետ, քանի որ ոչ Խալիպայի եւ ոչ էլ յունական դիցարաններում այդպիսի անունով աստուածութեան մեմօ չենք հանդիպում:

Անհրաժեշտ է նշել, որ Խտարբերութիւն Յոյներից, էտրուսկները աւելի հաւատարիմ գտնուեցին (գուցէ եւ կրօնամոլութեան հետեւեալով) իրենց փոքրասիական մշակութային ակունքներին: Նրանց աշխարհաճանաչումը տարբերում էր յունականից, եւ եթէ անգամ նրանք ունեցել են գրականութիւն, ապա այդ գրականութիւնը չի ունեցել Հոմերոսի եւ Էսքիլէսի նման վերաիմաստաւորողներ:

4.- էտրուսկների դիցարանում առանձնայատուկ տեղ են գրաւում մի տեսակ ոգիներ «լագ» անուանումով: Խալիպայի Պեպլոնից քաղաքի մօտակայքի պեղումներում գտնուած էր ցուլի լեարդի մի պրոնգէ քանդակ, որի վրայ գրուած էին աստուածութիւնների անուններ: Այդ պրոնգէ լեարդը նոյնպէս ցուցադրուեց Կրան-Փալէում: Ենթադրում է որ այն օգտագործուել է քալստագուշակների կողմից, որոնց աւանդոյթները մեզ նոյնպէս տանում են մինչեւ Միջագետք: Այդ պրոնգէ լեարդի վրայ կայ մի անկիւն, որտեղ գրուած է «Լագեր» ("Las!"): Այդ լագերը տարբեր նշանակութիւն ունէին: Ոմանք կապուած էին մեռելների աշխարհի հետ եւ գրի էին առնում մեռելներին (համեմատեմք հայկական «գրող» քացասական իմաստով օգտագործուող բառի հետ): Ոմանք էլ շրջապատում էին էտրուսկական սիրոյ եւ պտղաբերութեան դիցուհու Տուրանին:

Պէտք է ասել որ հայկական Տարօն գաւառում ժամանակին պաշտուել է Տուրան դիցուհին (հաւանական է որ դա Աստղիկի անուանումներից մէկը լինէր): Այստեղ մենք նոյնպէս նման անունով աստուածութեան չենք հանդիպում ոչ մի ուրիշ դիցարանում: Իսկ հայկական առասպե-

լարանութեան մէջ մենք հանդիպում ենք նաեւ «լագ» անուանը: Այդ անունի նման ձեւը պահպանուել է «արալեգ շնագլուխ ոգիների անուանման հիմքում: Ինչպէս յիշում ենք շնագլուխ ոգիները որոնք շրջապատում էին Արա Գեղեցիկի պաշտամունքային իգական գոյգին (այդ ժամանակաշրջանում հանդէս եկող Շամիրամ անունով), վերակենդանացում էին Արա Գեղեցիկին, լիզելով նրա վերքերը:

Թէ ինչու ենք «արալեգ» բառի հիմքը համարում «լիգ» արմատը, կարող ենք պարզել հետեւեալից:

10րդ դարի հայ պատմիչ Թովմա Արծրունին «Լեզու» է անուանում Վան քաղաքից ոչ հեռու գտնուող այն գիւղը որտեղ յարութիւն առաւ Արա Գեղեցիկը: Այդ գիւղի անուանումը «Լեզգ» ձեւով պահպանուեց մինչեւ անգամ Ի. դարի սկիզբը:

Ինչպէս տեսնում ենք «արալեգ», «լեզու» եւ «լեզգ» բառերի ընդհանուր հիմքը «լեգ» արմատն է, որը համահնչիւն է էտրուսկական «լագ» (կամ «լագա») առասպելական ոգիների անուանման հետ: Եզնիկ Կողբացին (Ե. դար) յիշատակում է արալեզներին իբրեւ շնագլուխ էակներ: Եւ էտրուսկների աւանդութեան մէջ մենք շատ ենք հանդիպում շան (կամ գայլի) պաշտամունքի հետքերի: էտրուսկեան մշակոյթի աւանդութեան վառ օրինակը կարող է ծառայել Հոմերի խորհրդանշը՝ «Կապիտոլեան գայլը» եւ մի շարք ուրիշ փաստեր:

Հետաքրքիր տուեալներ կարելի է քաղել էտրուսկների լեզուից, որից ցաւօք մեզ հասել են եւ ինչ որ չափով ուսումնասիրուել են ոչ մեծ քանակի բառեր: Երկարամեայ ուսումնասիրութիւնները կարծես թէ բերում են լեզուաբաններին այն կարծիքի, որ էտրուսկների լեզուն իր քերականական կառուցուածքով նման է խուրրիականին, որի տարբերակն է

Ուրարտուի արձանագրութիւնների լեզուն:

Սակայն էտրուսկները օգտագործել են մի այբուբեն, որի արտաքին տեսքը եւ նշանակութիւնը բաւականին մօտ են յունական եւ լատինական տառերին: Չը նայած այդ նմանութեանը, էտրուսկների գիրը այնքան առանձնայատկութիւններ եւ տարբերակներ ունէր, որ անգամ մինչեւ վերջին ժամանակներս դեռ գոյութիւն ունէր մի կարծիք թէ՛ «էտրուսկերէնը չի կարդացում»: Սակայն բազմաթիւ հետազոտողներ այս կամ այն կերպ իրենց հետազոտութիւններում գալիս են այն արդիւնքին, որի ուրուագծերը դեռ 30-ական թուականներին տուեց յայտնի կովկասագէտ եւ հայագէտ Նիկոլա Մառը: Նա դիտում էր էտրուսկներին որպէս խառը էթնիկական կազմաւորում, սակայն նրանց լեզուի ակունքները նա տեսնում էր կովկասեան եւ հնագոյն միջերկրածովային լեզուներում: Ինչպէս տեսնում ենք, փաստերը եւ նոր եզրայանգումները միայն հաստատում են

այդ վարկածը:

Սակայն մեր նպատակը այն է որ հնարաւորին չափով նշենք հայկական տարրի առկայութիւնը էտրուսկների մշակոյթում, որի ապացոյցն են վերոյիշեալ փաստարկումները:

Խօսելով էտրուսկների լեզուի մասին չի կարելի անտեսել մի շարք բառեր, որոնք աչիի են ընկնում առաջին իսկ հայեացքից: Չը յաւակնելով խորը պատմալեզուաբանական վերլուծութեանը, յուսալով որ այն անելի մանրակրկիտ կ'ուսումնասիրուի մասնագէտների կողմից, հարկ ենք համարում որպէս օրինակ ցոյց տալ մի քանի բառեր որոնք զարմանալիօրէն նմանութիւն ունեն հայկական բառերի հետ: Որոշ բառերի նմանութիւնը այլ եւրոպական լեզուների բառերին, կարելի է քացատրել կա՛մ նախալեզուներում գոյութիւն ունեցող ընդհանուր կապով, կամ էլ անելի ուշ շրջանի էտրուսկերէնից փոխառութիւնով:

էտրուսկ.	նշանակութիւն	- Հայերէն
an	(ան, այն)	- ան, էն (բարբառ)
arz	(առիւծ)	- առիւծ, արջ
ais	(իրէշ, դեւ)	- այսահարուել (դիւանալ, խենթեմալ)
Ani	(Անի դիցանուն)	- Անի քաղաք Հայաստանում (?)
Arzakena	(ծովածոցի անունը Սիկիլայում)	- Արծկէն (Արծն քաղաքի անուանումը, շուրջ «60 թ. Ք. Ա.: Արգական գիւղ Կոտայքում, Արցախ (?)
cer	(կառուցել)	- կերտել
ca	(այս, սա)	- սա
culixna	(աման)	- կուլա (կուժի տեսակ)
eleiva	(իւղ)	- եղ (բարբառ)
eca	(այս է)	- եսա, հեսա (բարբառ)
har(a)	(հարուածել)	- հարել, հարուած
mlac	(մլակ)	- մղակ, մղել
munth	(նկուղ)	- մութ
mach	(մէկ)	- մէկ

huth	(ուլթ)	- ուլթ
ita	(այս)	- իդա (վանի բարբառ), էտա (խօսակցական)
pisice	(բժիշկ)	- բուժիչ
parsu	(առեւանգել)	- փախցնել
thui	(այստեղ)	- տի (ղարաբաղեան բարբառ), տիա(Շիրակի)
thes	(արարողություն)	- ծէս, ծիսակատարություն
vinum	(գինի)	- գինի, դվինո (վրացերեն)
zina	(պատրաստել)	- շինել, շէն
zix, zic	(գրել)	- սեղ(մել), սեպագրել, փորագրել (?)
tiv	(լուսին)	- տիւ (օր, լոյս): Նոյն լեզուում «tiv» եւ «tibia» նոյն արմատով տարբեր ուղղագրությունը չպետք է զարմացնի ինչպէս եւ Ֆրանսերէնում «livre» (գիրք) եւ «librairie»
tupi	(գարկ, հարուած)	- տփել (խօսակցական)
tur	(նուիրել, տալ)	- տուրք (հին ժողովուրդները յաճախ տուրքը վճարում էին նուիրատուութեան ձեւով):

Հարկ է նշել որ «arz(a)» բառը «արջ» նշանակութիւնով, որը Պաւսանի լեզուում նկատել էր Ն. Մառը, շարունակում է այդ լեզուական կապը մինչեւ Սպանիա: Ի դէպ հէնց սպանական լեզուների մէջ ենք աւելի յաճախ նկատում «ւ» եւ «պ» տառերի եւ հնչիւնների անցումները՝ «tribune» (ֆր.) - tribuna (սպաներէն, սակայն արտասանում է «թրիվունա»). vivienda (սպաներէն «բնակարան» արտասանում է «պիվինետա») եւ այլն: Կարծում ենք որ սպանական լեզուները, որպէս աւելի հեռաւոր (փերիֆերիք) լեզուներ, իտալական լեզուների համեմատ, կարող էին պահպանել այդ լեզուական «արփաիզմը», որը բնորոշ էր էտրուսկերէնին:

Իրենց իսկ, էտրուսկների լեզուն, մշակոյթը եւ պատմութիւնը ուսումնասիրելիս գալիս եւ այն եզրայանգման որ այդ ժողովրդի նախնիներին պէտք է փնտռել այն տարածքում, որտեղ խաչածեւում էին հնդեւրոպական, սեմական եւ խուրրիական մշակոյթները: Ամենահաւանական է որ այդ տարածքը պէտք է տեղադրուէր Հայկական լեռնաշ-

խարհ - Կիլիկիա շրջանում: Հէնց այդ շրջանի հիւսիսային մասում է գտնուել հիթիթական արձանագրութիւններում նշուած «Դիպիա» երկիրը: Հէնց այնտեղ էին խաչածեւում հիթիթա - փուլգիական եւ Հայաստանի (հնդեւրոպական), խուրրի - ուրարտական եւ միտանիական (խուրրիական), ասորա - բաբելոնական եւ փիւնիկեան (սեմական) մշակոյթները:

Էտրուսկները իրենց անուանել են «tusc» (որտեղից եւ Թոսեման): Սակայն այս արմատով մենք ունենք վանի «Տոսպ» («Թուշպա») անուանումը: Յայտնի է որ վան (կամ Պիայնա) ամբողջ Արարատեան (Ուրարտու) թագաւորութեան ինքնանուանումն է եղել:

Տարբեր ժողովուրդների կողմից էտրուսկների նախնիները կոչուել են Տիրտեններ (այստեղից Պալէարեան կղզիների հին՝ Տիրտենեան անուանումը), Տիրրեններ (Տիրտենեան ծովը, որի ափին է Թոսեման) եւ Տարտեններ (այստեղ եւ միանում եմ այն ուսումնասիրողներին որոնք կապում են այդ անուանումը Կիլիկիայի Տարսաղափի հետ):

Այս Տիրեն - Տարսեն - Տիրսենները կամ Տուս - Տուշ - էտրուսկները իրենց հետքերն են թողել ամբողջ միջերկրածովային շրջանում, սակայն եթե բոլոր պատմական աղբյուրների հիման վրայ կատարուած ուսումնասիրութիւնների արդիւնքները ենթարկենք քեկուզ մօտաւորապէս ժամանակագրութեան, ապա պարզ կը լինի հետեւեալը.-

էտրուսկների նախնիները, յայտնաբերելով իրենց հետքերը Վանայ լճի շրջաններում եւ Կիլիկիայում, յետագայում՝ (մօտաւորապէս Ք. Ա. Երկրորդ Հազարամեակի երկրորդ կիսում) սկսում են իրենց գաղթը Փոքր Ասիայի արեւելք, եգէականեան եւ միջերկրածովային կղզիներով մինչեւ Սպանիա։ Սակայն նրանց յաջողութիւնը Պետութիւն ստեղծել միայն իտալիական (Ապպենինեան) թերակղզու վրայ, այսօրուայ Թոսկանա մարզում (Ք. Ա. Ութերորդ դար)։ Մի քանի դարերի ընթացքում այդ ժողովուրդը ամենատարբեր աղբյուրներում յիշատակուել է որպէս ռազմատենչ ծովահէններ, եւ որպէս ամենաառաջաւոր մշակոյթ, գիտութիւն եւ արուեստներ կրող եւ տարածողներ։

Կարելի է շատ երկար եւ մանրակրկիտ ձեռնով ներկայացնել ամէն մի սկզբնաղբիւրի տուեալները իրենց մեկնաբանութեամբ եւ իրենց խնդիրներով։ Սակայն մի յօդուածի ծաւալը թոյլ չի տալիս այդ չափով ընդարձակուելու։

Դրա փոխարէն կ'ուզէի հակիրճ ձեռնով ներկայացնել այն հիմնական կէտերը որոնց հիման վրայ պարզ է դառնում էտրուսկների եւ Հայերի մշակութային ընդհանրութեան տարրերը։

1.- էտրուսկների հետքերը յայտնաբերում են Հայկական լեռնաշխարհում Տոսպ տեղանունի, որը կապուած է էտրուսկների «տուս» ինքնանունման հետ, Արեւի աստուածութեան Տուրան դիցուհու, Նեմնիա-Նանէ, Տարֆոն-Տորֆ,

լագա-արալեզների ընդհանուր պաշտամունքով եւ նրանց հետ կապուած երաժշտական մշակոյթով։ Հետաքրքիր է նշել նաեւ ուրարտական Սարդի դիցուհու պաշտամունքը, որի անունը համահնչիւն է էտրուսկների ազգակից՝ Լիդիացիների մայրաքաղաք Սարդ եւ յետագայում Սարդինիայի ժողովրդի նախահայր՝ Սարդի հետ։ էտրուսկների հայկական լեռնաշխարհի հետ են կապում նաեւ մի շարք քառեր, որոնց մեծ մասը պատկանում է լեզուի հիմնական քառապաշարին։

2-ի կարելի անտեսել նաեւ այն փաստը որ նախաէտրուսկների հետ զուգահեռ գաղթին մասնակցել են նաեւ նախահայկական ցեղերից՝ Արիմները (որոնց անունով էլ այլ ազգերը սկսել են անուանել Հայերին, կոչելով մեզ «արմէն»)։ Հռոմէական պատմիչներ Սերվիլիուսը եւ Պլինիուս Աւագը տեղեկացնում են որ էտրուսկները Պիտեկուս կղզին գրաւելուց յետոյ այն վերանուանեցին Ինարիմա անունով։ Ակադեմիկոս Սուրեն Երեմեանի կարծիքով դրա պատճառն էր այդ կղզում Արիմների հաստատուելը։

Եւ վերջապէս, Հայկական լեռնաշխարհի հետ է կապում էտրուսկներին մետաղամշական հարուստ աւանդութիւնը։ Ա. Փիկանեոլը, Հ. Մուլեշտայը, Թ. Ամանտինը եւ ուրիշները զարմանքով նշում էին որ էտրուսկների պրոնզէ որոշ իրերը բոլորից աւելի նման են ուրարտականին։

էտրուսկների նախնիների գաղթի ելման կէտը, ըստ ունեցած տուեալների կարելի է համարել Կիլիկիայի Տարս քաղաքը։ Կարծում ենք որ այդ տեղանունը, ինչպէս եւ նախաէտրուսկների «Տարսէններ» ցեղանունը կապ ունի լիդիական արձանագրութիւններից Տարսեմա մայր - դիցուհու անունն հետ։ (Պատահական չէին Տիրսէն - Տարսէններին Լիդիացիների ցեղակից

համարում): Այդ ժողովուրդը յիշատակում է որպես «տուրուշա» (գրուած «տըշ») եգիպտական Կարնակայի պատերի արձանագրութիւններում. որպէս «Տար-սի-սի»՝ ասորական Ասարհադդոն արքայի «յաղթական արձանագրութիւններում», որպէս Թարսիս՝ Հին Կտակարանում, որպէս տիրսէն - տարսէն - տիրէններ, անտիկ հեղինակների մօտ:

Այդ հարցում բոլոր հետազոտողները համամիտ են, միայն ոչ բոլորն են կապում Տարսէններին Տարս քաղաքի անուն հետ: Կարծում ենք որ դրա պատճառը այն է որ տարբեր ժամանակներում այդ անունները տարբեր տեղերի հետ էին կապուած: Բայց չէ՞ որ դա բնական է, քանի որ խօսքը գնում է մի ժողովուրդի մասին որը մօտաւորապէս եօթը դարերի ընթացքում կատարել է իր գաղթը Հայկական լեռնաշխարհից մինչեւ Սպանիա: Հնարաւոր է որ հէնց Տարսէններից է գալիս Սպանիայի առասպելական Տարտես (յիշենք Թարսիս) քաղաքի անունը եւ այդ մարզի Կռնատա (որը նշանակում է «նուռ»): Զէ՞ որ էտրուսկները առաջինն էին որ այդ միջոցը բերեցին իրենց հետ. ինչպէս եւ խաղողամշակման եւ գինեգործութեան աւանդոյթները: Եթէ դրանց գումարենք

նաեւ տուֆ քարի մշակումը ապա գումարած ամբողջ վերոյիշեալ տուեալների հետ մէկտեղ, պարզ կը լինի թէ ինչու էտրուսկների մշակոյթը եւ պատմութիւնը գրաւեցին հայագետի ուշադրութիւնը:

Հետաքրքիր է որ էտրուրիայի քաղաքներից մեծ մասը կառուցուած են Կիլիկիայի Տարս քաղաքի դիրքորոշմամբ: Տարսը գտնում է գետի ափին եւ նրա միջոցով է միանում ծովին: Հէնց այդպէս էին տեղադրուած էտրուրիայի բոլոր քաղաքները, ծովի հետ միանալով կա՛մ գետով կա՛մ էլ յատուկ ջրանցքով: Այդպիսի տեղադրումը յարմար էր եւ նաւաշինութեան եւ ծովից անսպասելի յարձակումներին դիմադրութեան համար: Համոզուած եմ որ հայկական նաւաշինութիւնը ուսումնասիրողները շատ ընդհանրութիւններ կը գտնեն էտրուսկների նաւերի, որոնք յայտնի են իբրեւ «տիրէնեան» եւ «Թարսիսի» նաւեր եւ Կիլիկիայի, Վանայ լճի նաւաշինութեան նմոյշների, որոնց նմանօրինակները գտնուել են Լճաշէնի, Վարդենիսի եւ Նոյեմբերեանի պեղումներից: Զէ՞ որ Նոյի Տապանը նոյնպէս կապում է Հայկական լեռնաշխարհի հետ:

ԵՂՈՒԱՐԴ ԲԱՐՍԵՂԵԱՆ

(ՅԱՌԱՋ)